

ՀԱՅԱՑՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

ԶԱՔԱՐՅԱՆ Ա. Հ.

Կարկառուն հայագետ, վաստակաշատ մանկավարժ, ազգային-հասարակական-գրական հայտնի գործիչ Մանուկ Աբեղյանն այն 23 անձանցից մեկն էր, ովքեր դարձան 1943 թ. նոյեմբերի 25-ին ստեղծված Հայաստանի գիտությունների ակադեմիայի (Մ. Աբեղյանի իմաստալից հապավմամբ՝ ՀԱՅ-



ԳԻՏԱԿ-ի) հիմնադիր անդամները: Նոյեմբերի 29-ի երեկոյան Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում տեղի ունեցած Գիտությունների ակադեմիայի հիմնադրմանը նվիրված հանդիսավոր նիստում ԳԱ նախագահության հանձնարարությամբ հյուրերի ողջույնների խոսքին ընդարձակ ելույթով պատասխանում է «ավագագույն» գիտնական Մ. Աբեղյանը: Համառոտակի անդրադառնալով Հայաստանում գիտության ձեռք բերած նվաճումներին, հանրապետության գիտական հիմնարկների անցած ճանապարհին, ապա ընդհանուր գծերով շարադրելով իր ծրագրային մո-

տեցումները ակադեմիայի զարգացման ուղիների մասին՝ Մ. Աբեղյանը նշում է. «Ակադեմիան պիտի գործի և աշխատի մեր ժողովրդի բոլոր խավերի համար. նրա գիտական աշխատությունների հրատարակությունները միայն սակավաթիվ ընտրյալների համար չպիտի լինեն, այլ լինելով բոլորը հայերեն լեզվով, հարկավ, մեծ զարկ պիտի տան մեր հայ ժողովրդի մտավորապես զարգացմանը, քանի որ մեր ժողովրդի զանազան խավերը հնարավորություն կունենան ըստ կարելուն օգտվելու մեր Գիտակի գիտական նվաճումներից: Բայց հայերեն լեզուն, որ անպայման անհրաժեշտ է, այդ միայն բավական չէ. հարկավոր է մեր հայկական գիտական միտքը թափանցի նաև մեր Միության ուրիշ կողմերը: Ուստի հարկավոր է, որ մեր ակադեմիան իր հրատարակություններն անի անպայման միաժամանակ և հայերեն, և ռուսերեն: Չպիտի խնայել, կարծում եմ, երկլեզվյան հրատարակության համար անհրաժեշտ նյութական միջոցները: Այդպիսի հրատարակությամբ հայ Ակադեմիայի գիտական նվաճումներին հաղորդակից կդառնան մի կողմից մեր ժողովուրդը, մյուս կողմից մեր Միության գիտական աշխատավորները և ուրիշները: Ռուսերեն լեզվով անշուշտ նաև կանցնեն արտասահմանում, եթե հնարավոր չի շատ կարևոր գիտական հրատարակությունների համառոտ ամփոփումը նաև մի այլ լեզվով տալ: Դրանով և Սովետական Միության մեջ և

դրսում կճանաչվեն մեր գիտական գործունեությունը և մեր ժողովուրդը»¹: Այնուհետև մեծանուն գիտնականը, իր խոսքը մասնավորեցնելով, հայագիտության մասին ասում է. «Հայաստանի Ակադեմիան գիտության բոլոր ճյուղերի զարգացման հետ միասին՝ առանձնապես պետք է զբաղվի հայագիտությամբ, այս գիտությունը շատ ընդարձակ մտքով առած, և պատմություն, և գրականություն, և հայ լեզու, հայ ֆոլկլոր, Հայաստանի ազգագրություն, տեղագրություն, հնախոսություն, արվեստ և այլն: Այդ առարկային սկզբից հենց մեծ զարկ պիտի տա մեր Գիտակը. մենք ամենից առաջ պետք է ճանաչենք մենք մեզ, մեր ժողովրդի ու մեր երկրի անցյալը, գիտականորեն և լայնորեն պարզենք ու վեր հանենք այն բոլոր կուլտուրական նվաճումները, որ արել են մեր նախնիքները, որ և այժմ մեր պարծանքը է և պիտի լինի: Դրանով մեր Ակադեմիան մեծ գործ կատարած կլինի և այնու, որ և մենք, նաև մեր Միության ժողովուրդները, ինչպես և դրսում ուրիշները կճանաչեն հայկական անցյալը և ըստ արժանվույն կգնահատեն այն: Այսուհետև քանի որ Հայկական Գիտությունների» ակադեմիա ունենք, հայկագիտության վերաբերյալ ամեն խնդրի համար, ընկերներ, շուտով դիմելու են մեզ, մեր Ակադեմիային, և նա պիտի պատրաստ լինի ամենքին ամեն տեսակի գիտական, իսկական գիտական տեղեկություններ տալով պատասխանելու»²:

Ինչևէ, տեսական և գործնական մի շարք ծրագրային խնդիրներ առաջադրող նրա խոսքը (մասնավորապես Ն. Մառի և Լ. Օրբելու կարծիքները գիտության կազմակերպման, գիտական կադրերի, ակադեմիական հրատարակությունների լեզվի և հայագիտության զարգացման հարցերի շուրջ) այսօր էլ չի կորցրել իր արդիական հնչեղությունը:

Ամենին հավակնություն չունենալով արժևորել մեծ հայագետի աշխատությունները (դա փայլուն կատարվել է)՝ ստորև հակիրճ ներկայացնենք ակադեմիկոս Մ. Արեղյանի՝ գիտական հանրությանը լայնորեն հայտնի տիտանական կերպարն իր ապրած տարիներով ու վաստակով:

Մանուկ Խաչատուրի Արեղյանը ծնվել է 1865 թ. մարտի 17-ին Հին Նախիջևանի Աստապատ գյուղում (պատմական այս գյուղը 1960-ական թվականների երկրորդ կեսին Արաքսի ջրամբարը կառուցելիս անցել է ջրի տակ): Սկզբնական ու միջնակարգ կրթությունը ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1885 թ. առաջնակարգ մրցանագրով (դիպլոմով) ավարտելով ճեմարանը՝ մի քանի տարի Էջմիածնում, Շուշիում, Թիֆլիսում զբաղվել է մանկավարժական, գիտական և լրագրողական աշխատանքով: 1893 թ. հայ մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանի նյութական օժանդակ-

¹ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Մ. Արեղյանի ֆոնդ, N 85 (ինքնագիր, սևագիր): Տե՛ս նաև Զաքարյան Ա., Մանուկ Արեղյանի ելույթը Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրմանը նվիրված հանդիսավոր նիստում, Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ, 2013, N 2, էջ 9-10):

² ԳԱԹ, Մ. Արեղյանի ֆոնդ, N 85, Զաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 10:

կությանը մեկնում է Գերմանիա՝ ուսանելու: Ենայի, ապա Լայպցիգի, հետո Բեռլինի համալսարաններում խորամուխ է լինում բանասիրության և փիլիսոփայության մեջ: 1895 թ. գնում է Փարիզ և, որպես բանասիրության ազատ ունկնդիր, մեկ տարի ուսանում Սորբոնի համալսարանում: Այստեղ Աբեղյանը հիմնավորապես տիրապետում է գերմաներենին ու ֆրանսերենին, խորանում գերմանա-ֆրանսիական դասական բանասիրության գլխավոր առարկաների մեջ (լեզու, պատմություն, գրականություն, գրականության տեսություն, փիլիսոփայություն), շփվում է ժամանակի մի շարք նշանավոր պրոֆեսորների, այդ թվում՝ անվանի հայագետներ Հ. Գելցերի և Ա. Մեյերի հետ: 1898 թ. Աբեղյանն ավարտական քննություններ է հանձնում Ենայի համալսարանում՝ քննության գլխավոր ճյուղ ընտրելով ընդհանուր պատմությունը, իսկ երկրորդական ճյուղ՝ ընդհանուր փիլիսոփայությունն ու ֆրանսերենը: Այստեղ էլ նա գերմաներենով որպես ավարտական դիսերտացիա է ներկայացնում «Հայ ժողովրդական հավատալիքը» աշխատությունը (հրատարակվում է Լայպցիգում, 1899 թ.) և ստանում փիլիսոփայության դոկտորի աստիճան ու դիպլոմ:

Մ. Աբեղյանը, 1898 թ. Գերմանիայից վերադառնալով հայրենիք, զբաղվում է մանկավարժական, գրական-հասարակական և գիտահետազոտական արդյունավետ գործունեությամբ: Շուրջ 40 տարի պաշտոնավարել է ուսումնական հաստատություններում, որից 10 տարի՝ Թիֆլիսի Ներսիսյան, Հովնանյան և Շուշիի թեմական դպրոցներում, 30 տարի՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Կովկասյան և Երևանի պետական համալսարաններում: Դրան զուգընթաց՝ Աբեղյանը ծավալել է ազգային-հասարակական, գրական բեղմնավոր գործունեություն, ակտիվ մասնակցություն ունեցել մշակութային զանազան ընկերությունների ու կազմակերպությունների աշխատանքներին. Թիֆլիսում, Բաքվում, Երևանում և այլուր կարդացել է հրապարակային բազմաթիվ դասախոսություններ, եղել է Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության խմբագրական հանձնաժողովի անդամ, կատարել է Էջմիածնի գավառի հայ ուսուցիչների արհեստակցական միության մասնաճյուղի նախագահի պարտականությունը, ակտիվորեն աշխատակցել է «Նոր-դար», «Մուրճ», «Արարատ», «Ազգագրական հանդես», «Ժողովրդի ձայն», «Նորք» և այլ թերթերի ու հանդեսների: Մ. Աբեղյանը եղել է Հայաստանի անկուսակցականների միության փոխնախագահը:

Շուրջ 60 տարի (1880-ականներից մինչև 1940-ականների կեսերը) ծավալել է գիտահետազոտական անխոնջ գործունեություն: Ըստ անվանի բանագետ, արեղյանագետ Մ. Հարությունյանի՝ նրա գիտական գործունեությունը ժամանակագրական առումով բաժանվում է 2 հիմնական շրջանի. առաջինն ընդգրկում է 1886–1893 թթ., այն է՝ «Մասնա ծոեր» հերոսավեպի՝ Սրվանձտյանցից հետո երկրորդ պատումի գրառումից (1886 թ.՝ Գևորգյան ճեմարանի դոնապան մոկացի Նահապետից՝ Նախո քեռուց), 1888 թ. Շուշիում իր «Նմուշներ» խորագրով բանաստեղծությունների գրքի հրատարակումից, 1889 թ. «Դավիթ և Մհեր» պա-

տումի տպագրումից, 1892 թ. Կոզոլի «Տարաս Բուլբան» թարգմանաբար հայերեն լույս ընծայելուց մինչև Եվրոպա մեկնելը: Երկրորդ շրջանն ընդգրկում է 1896–1897 թվականներից, այն է՝ «Գրական դպրոցներ» աշխատության տպագրությունից մինչև արգասավոր կյանքի ավարտը: Գիտական գործունեության երկրորդ շրջանում նա հանդես է գալիս իբրև՝ ա) բանագետ ու առասպելագետ [*«Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ»* (Վաղարշապատ, 1900), *«Հայ ժողովրդական վեպը»* (Թիֆլիս, 1908), *«Հին գուսանական ժողովրդական երգեր»* (Երևան, 1931), *«Հայ վիպական բանահյուսություն»* (Երևան, 1930-ական թվականներ), *«Ժողովրդական խաղիկներ»* (Երևան, 1940), *«Վիշապներ»* կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ» (Երևան, 1941), *«Մասնա ծոերի»* հինգ տասնյակ պատումների գիտական համահավաք (Կ. Մելիք-Օհանջանյանի ակտիվ համագործակցությամբ), որը հրատարակվում է Երևանում երեք գրքով՝ 1936, 1944, 1951 թթ. և այլն], բ) գրականության տեսաբան ու պատմաբան [*«Ուրվագծեր 19-րդ դարու Հայոց գրականության պատմությունից»* («Արարատ», 1908–1909), *«Շարականների մասին»* («Արարատ», 1912, N 7–8, 9, 10–11, 12), *«Մ. Խորենացու «Հայոց պատմության» բաղդատական բնագիրը»* (Թիֆլիս, 1913), *«Մ. Գրիգոր Նարեկացի»* («Ազգագրական հանդես», 1916), *«Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության»* (1917), *«Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ»* (Երևան, 1935), *«Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը»* («Սովետական գրականություն», 1941 -1, 2), *«Կորյունի «Վարք Մաշտոցի» բաղդատական բնագիրը»* (Երևան, 1941) և այլն], գ) լեզվաբան քերականագետ ու տերմինաշինարար բառարանագիր [*«Աշխարհաբարի քերականություն»* (Վաղարշապատ, 1906), *«Աշխարհաբարի շարահյուսությունը»* (Վաղարշապատ, 1912), *«Ռուս-հայերեն իրավաբանական տերմինների առձեռն բառարան»* (Թիֆլիս, 1919), *«Ռուս-հայերեն ռազմական բառարան»* (Երևան, 1925), *«Հայոց լեզվի տեսություն»* (Երևան, 1931), *«Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան»* (մասնակի հեղինակակցությամբ, Երևան 1951) և այլն], դ) հայ տաղաչափության գիտական համակարգող ու տեսաբան [*«Հայոց լեզվի տաղաչափություն: Մետրիկա»* (Երևան, 1933)]³:

Մ. Արեղյանը 1921 թ. Հայաստանի լուսժողովուրդի հանձնարարությամբ պատրաստում է հայոց լեզվի ուղղագրության ռեֆորմի նախագիծը, որի հիման վրա և Ժողովուրդի 1922 թ. հրապարակում է նոր ուղղագրության դեկրետը՝ նպատակ ունենալով դուրսացնել զանգվածային ուսուցման գործը: Ինչպես ժամանակին նկատել է ակադեմիկոս Գ. Ջահուկյանն իր «Մանուկ Արեղյանի լեզվագիտական հայացքների արդիական արժեքը» թեմայով զեկուցման մեջ, Մ. Արեղյանի ձեռնարկած ուղղագրական ռեֆորմը բխում էր մեր իրականությո-

³ Թվարկված աշխատությունների մասին մանրամասն տե՛ս Հարությունյան Ա., Մանուկ Արեղյան. գիտական վաստակի գնահատման ուրվագիծ (ծննդյան 140-ամյակի առթիվ), ՊԲՀ, 2006, N 1, էջ 6-26:

յան մեջ տիրող վիճակից և նպատակ ունեւ վերացնել ուղղագրության մեջ առկա քառք, նորմավորել լեզվական իրողությունները: Ճիշտ է, նոր ուղղագրությունն իր ժամանակին և այժմ էլ հանդիպում է որոշակի ընդդիմության, սակայն այն լիովին համապատասխանում է արդի հայերենի պահանջներին և հիմնավորված է հնչյունաբանորեն, մանկավարժորեն և պատմականորեն⁴:

Մեծանուն գիտնականի գիտահետազոտական աշխատանքը հատկապես արգասավոր է եղել կյանքի վերջին երկու տասնամյակներին, երբ ի հայտ է եկել գիտամանկավարժական կազմակերպչի նրա անուրանալի ձիրքը: Մ. Աբեղյանը 1923-1925 թթ. վարել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնը: 1925-1930 թթ. եղել է ՀԽՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի խորհրդի նախագահը: Վերջինս, փաստորեն, մեզանում եղել է հայագիտական առաջին կենտրոնը՝ իր բաժանմունքներով: Մ. Աբեղյանն աչքերի հիվանդության պատճառով 1931 թ. հրաժարվել է Երևանի պետհամալսարանում դասավանդելուց և անցել կենսաթոշակի: 1931-1944 թթ. Մ. Աբեղյանը եղել է Հայաստանի կուլտուրայի պատմության, Պատմության և գրականության ինստիտուտների նախագահության անդամ, ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի գրականության և լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի հին գրականության և ժողովրդական բանահյուսության բաժնի վարիչ, ավագ գիտական աշխատակից: Ի դեպ, 1932 թ. նա ընտրվում է Հայաստանի Կենտրոնական նախագահությանն առընթեր կազմված ՀԽՍՀ բնակավայրերի անունների ճշգրտման ու ձևավորման հանրապետական հանձնաժողովի նախագահ և տերմինաբանական հանձնաժողովի անդամ: Այդ ընթացքում կազմակերպում է Հ. Պարոնյանի երկերի հրատարակությունը, Շիրվանզադեի հոբելյանի անցկացումը: Վստահորեն կարելի է ասել, որ նրան է պատկանում «Մասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստի պատրաստման և 1939 թ. էպոսի 1000-ամյա հոբելյանի անցկացման գաղափարը: Ի դեպ, հարկ է նշել, որ Հայաստանում չի եղել որևէ կարևոր մշակութային միջոցառում, որին օժանդակած ու մասնակցած չլինի Մ. Աբեղյանը:

Իր գիտական, հասարակական-մանկավարժական երկարամյա գործունեության համար Աբեղյանը գնահատվել ու մեծարվել է Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից: 1925-1931 թթ. նա ընտրվել է Հայաստանի և Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր կոմիտեների անդամ: 1935 թ. նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում և հասարակական գիտությունների դոկտորի աստիճան՝ առանց ատենախոսության պաշտպանության (հրապարակված գիտական աշխատությունների հիման վրա): 1940 թ. Մ. Աբեղյանը պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով:

Մ. Աբեղյանին քանիցս առաջարկվել է ստանձնել Ակադեմիայի գրականության ինստիտուտի դիրեկտորի պաշտոնը, սակայն նա

⁴ Տե՛ս ՊԲՀ, 1990, N 1, էջ 242:

հրաժարվել է՝ պատճառաբանելով իր «անբավարար ուժերն» ու «սուղ ժամանակը»: «Զափազանց շնորհակալ եմ, որ երեկ ուղարկեցիք ինձ Հայկ. Գիտ. Ակադեմիայի գրականության ինստիտուտի Կանոնադրությունը, «բացատրական գրությամբ» և «շտատների նախագծով» հանդերձ: Դրանցով ես ծանոթացա այն բազմաթիվ ու բազմազան պարտականություններին, որ Գրակ. ինստիտուտի դիրեկտորը պիտի կատարի ինքը մենակ,– 1944 թ. հունվարի 3-ին գրում է Մ. Աբեղյանը Գիտությունների ակադեմիայի գիտական քարտուղար Խ. Մոմճյանին:– Արդ՝ նկատի ունենալով իմ անբավարար ուժերը և սուղ ժամանակը՝ ես ինձ անկարող եմ համարում ըստ պատշաճի կատարելու նույն ինստիտուտի դիրեկտորի պաշտոնը: Ուստի դարձյալ խնդրում եմ՝ այլևս նկատի չունենաք իմ թեկնածությունը: Համոզված եղեք, որ եթե կարողանայի՝ չէի հրաժարվիլ այդ գործից:

Խնդրում եմ այս մասին հայտնեք և ակադ. Օրբելուն»⁵:

Ռազմաճակատում անհայտ կորած որդու վիշտը, պատերազմական ծանր օրերը, վատթարացող առողջությունը գիտության «հսկա կադնուն» հասցնում են մահվան դուռ. մեծանուն գիտնականն ու քաղաքացին 1944 թ. սեպտեմբերի 25-ին՝ 79 տարեկան հասակում կնքում է իր մահկանացուն: Հուղարկավորությունը կատարվում է Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճից հոկտեմբերի 1-ին: Կառավարության որոշմամբ նրան թաղում են Երևանի քաղաքային պանթեոնում: Մ. Աբեղյանի հիշատակը հավերժացնելու համար Հայաստանի կառավարությունը հատուկ որոշում է ընդունում՝ Հայաստանի ակադեմիայի գրականության ինստիտուտը և Երևանի հայկական միջնակարգ դպրոցներից մեկը կոչել Մանուկ Աբեղյանի անունով, հրատարակել նրա երկերի լիակատար ժողովածուն, սահմանել Աբեղյանի անվան ուսանողական և ասպիրանտական թոշակներ Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում և ակադեմիայի գրականության ինստիտուտում:

Նկատենք, որ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտն արդեն իսկ 1945 թ. լույս է ընծայում նրա «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության Ա հատորը, 1946 թ.՝ Բ հատորը: 1946 թ. հրատարակած «Գրական-բանասիրական հետախուզումներ»-ի առաջին գիրքը ինստիտուտը նվիրել է մեծ հայագետի հիշատակին, նրա տարելիցների կապակցությամբ հրավիրվել են գիտական նստաշրջաններ, տպագրվել հոբելյանական բովանդակալից և արժեքավոր հոդվածներ (Ե. Տեր-Մինասյան, Խ. Սարգսյան, Արտ. Աբեղյան, Ա. Ղանալանյան, Կ. Մելիք-Օհանջանյան, Ս. Հարությունյան և այլք): Մ. Աբեղյանի կյանքն ու գիտական ժառանգության քննությունը դարձել է նաև մենագրական հատուկ հետազոտման առարկա. անվանի բանագետ Ս. Հարությունյանը լույս է ընծայել առաջին ամբողջական ստվար աշխատությունը, որտեղ XIX դարի երկրորդ և XX դարի առաջին կեսերի հայ ազգային-քաղա-

⁵ ԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆոնդ, N 98 (ինքնագիր):

Հայագր ՀՀ ԳԱԱ հիմնադիր անդամ Մանուկ Աբեղյանի գործունեությունը 49
քական ու գիտամշակութային կյանքի տեսադաշտի վրա բացահայտել ու արժևորել է Մ. Աբեղյանի տեղն ու դերը հայագիտության զարգացման պատմության մեջ⁶:

Հայագիտության տիտանի գիտական հարուստ և հսկայածավալ ժառանգության հիմնական մասը լույս է տեսել 1966-1985 թթ.՝ 8 հատորով: Դրանցում ընդգրկված են հայագետի ինչպես հիմնարար հետազոտությունները, որոնք վերաբերում են հայոց բանասիրության բոլոր բնագավառներին՝ գրականագիտության, լեզվաբանության և պատմության, բանագիտության ու տաղաչափության հարցերին, այնպես էլ հայագիտության պատմության մեջ բացառիկ դեր խաղացած մանր հետազոտությունները, մատենախոսությունները և բանավիճային հոդվածներն ու աշխատությունները, հուշերն ու գրական դիմանկարները: Աբեղյանի գիտական ժառանգության հրատարակության և հետազոտության գործը, սակայն, անավարտ է մնացել, քանզի կարևորագույն մի շարք գործեր դուրս են մնացել հրատարակված հատորներից: Երկերի մեջ չեն ընդգրկվել նրա գրչին պատկանող գեղարվեստական և թարգմանական գործերը, դասագրքերի ու ձեռնարկների մի մասը, հրապարակախոսական և այլ կարգի մի շարք հոդվածներ ու գրախոսություններ (մեծ մասամբ՝ «Վարսամ» ու «Գիսավոր» ծածկանուններով), բանահյուսական և պատմագրական սկզբնաղբյուրների հրատարակությունները (ժողովածուներ, բնագրեր):

Մեծանուն գիտնականի հայրենասիրությունը, լավատեսությունը, քաղաքական հեռատեսությունը և քաղաքացիական ազնվությունը, հարազատ ժողովրդի իդեերն ու ակնկալիքները, նրա քննադատական հատու խոսքն առանձնապես մեծ հնչեղություն ստացան հայոց պետականության վերականգնման և այդ առնչությամբ ժամանակի մտավորականության պահվածքի մասին, վրաց կառավարության վարած հակահայկական քաղաքականության դեմ գրած և լայն հանրությանն անծանոթ գործերում: Մ. Աբեղյանի և այդ օրերի մասին իր հուշերում Մտ. Զորյանը գրում է. «... 1918-1919 թթ. ես Ճանաչեցի Աբեղյանին նաև որպես հայրենասերի: Ճիշտ է, այդ հայտնի է արդեն նրա գրական ուսումնասիրությունից, բայց այդ թվերին ես տեսա նրա հայրենասիրությունը կյանքում, մեր ժողովրդի գլխին տեղացող շարունակական աղետների ժամանակ: Նա խորապես ապրում էր այդ աղետները և հանգիստ չուներ:

... Այդ աղետի օրերին, Աբեղյանը իրեն դրսևորում էր բացառիկ ձևով: Ծանր լուրերի, դեպքերի ազդեցության տակ շատերն ընկճվում էին, հուսահատվում և այլևս կարծես ելք չէին տեսնում մեր ժողովրդի համար. Աբեղյանը սակայն, թեև տխրում էր, տանջվում (մի անգամ ես մինչև իսկ տեսա նրան արտասվելիս՝ Էրզրումի, Կարսի անկման լուրն առնելուց հետո), բայց երբեք չէր կորցնում հույսն ու հավատը:

⁶ Տե՛ս Հարությունյան Ս., Մանուկ Աբեղյան: Կյանքն ու գործը, Ե., 1970, էջ 666:

– Եղել են ավելի ծանր օրեր և աղետներ, բայց մեր ժողովուրդը գտել է մի ելք և բուժել է իր վերքերը, – ասում էր նա ամեն անգամ, երբ նկատում էր, որ շուրջը՝ զրուցակիցները ընկնում են հուսահատության մեջ:

Այդ օրերին սրտապնդիչ էր լսել այդպիսի խոսքեր, մանավանդ մի հեղինակավոր մարդուց, որը, զգում էիր, թե քաջատեղյակ էր հայ ժողովրդի անցյալին ու պատմությանը: Այս խոսքերն ասվում էին այնպիսի հավատով ու համոզիչ շեշտով, որ մարդ թեթևություն էր զգում, և ինքն նստոգորվում էր հույսերով:

– Այո, հուսահատվելու կարիք չկա. ամեն ինչ դեռ կորած չէ...⁷:

Վերջերս հրատարակվել են (ՊԲՀ-ում և «Գիտություն» թերթում) «Մանուկ Հայաստանը», «Հայեր և վրացիներ» հոդվածաշարքերը և «Լոռի» պատմական ակնարկից մի հատված, որոնք Ստ. Զորյանի արձանագրած իրողության խոսուն վկայությունն են: Թվարկված գործերը առաջիկայում կհրատարակվեն նաև առանձին գրքույկով՝ «Մանուկ Արեղյանի հրապարակախոսական ժառանգությունից» խորագրի ներքո:

... Վերհանելով մեծ հայագետի, քաղաքացու և հայրենասերի բացառիկ կերպարը՝ Ավետիք Իսահակյանը Մ. Արեղյանի թաղման արարողության ժամանակ արտասանած իր հրաժեշտի խոսքում նկատել է, որ առանց նրա «անկարելի է պատկերացնել մեր կուլտուրական կյանքը»⁸:

⁷ Ստ. Զորյան, Հուշերի զիրք, Ե., 1991, էջ 199-200:

⁸ Տե՛ս ՊԲՀ, 1990, N 1, էջ 244: